## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
### ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

**Քաղաք Եղեգնաձոր** **21 փետրվար 2023թ. Ժամը՝ 11:00**

**Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը: Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քարտուղարության պետ Հ.Ռուստամյանը:**

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյանը, Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանը, Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանը, Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Հակոբյանը, ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյանը, ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյանը, ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Կ. Ասատրյանը, <<Վայք ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Ասլանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Սարգսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա. Կոստանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ. Խուդավերդյանը:

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը: Նա ներկայացրեց նիստի մասնակիցներին և քննարկման դրեց մարզխորհրդի նիստի օրակարգի նախագծի բոլոր 7 հարցերը: Առաջարկություններ, լրացումներ և դիտողություններ չինչեցին: Մարզխորհուրդը հաստատեց նիստի օրակարգը միաձայն:

**Օրակարգի առաջին հարց՝ Համայնքների սեփական եկամուտների (01.02.2023թ դրությամբ) հավաքագրման վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա.Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի փետրվարի 1-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 3 025 313.7 հազ. դրամ, առաջին ամսվա համար նախատեսվել է 222 725.6 հազ.դրամ,

տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 240 437.9 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 108.0%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 15.8%, կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 32 861.3 հազ.դրամ: Սեփական եկամուտներ՝ առաջին ամսվա համար նախատեսվել է 96 072.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 113 785.2 հազ. դրամ կամ կատարվել է 118.4%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 51.1% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 38 465.9 հազ. դրամ:

Ամփոփելով գանձապետական համակարգի տվյալները, 2022 թվականի փետրվարի 1-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեներով նախատեսվել է.

- **Անշարժ գույքի հարկ**՝ հունվար ամսվա համար պլանավորվել է հավաքագրել 9242.5 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 6202.3 հազ.դրամ կամ կատարվել է 67.1%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 64.0% կամ ավել հավաքագրվել է 2421.2 հազ. դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից**՝ հունվար ամսվա համար պլանավորվել է հավաքագրել 24 493.6 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 27 239.9 հազ. դրամ, կատարվել է 111.2%-ով:
- **Տեղական տուրքեր**՝ 2542.7 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 2528.2 հազ.դրամ, կատարվել է 99.4%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 46.0% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 796.0 հազ. դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն**՝ 36 003.2 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 65 865.6 հազ. դրամ, կատարվել է 182.9%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 104.0% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 33 582.8 հազ. դրամ:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 17914.1 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել 9825.2 հազ. դրամ, կատարվել է 54.8%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 3.7% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 285.4 հազ. դրամ:
- **Աղբահանության վճար**՝ նախատեսվել է 5803.8 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 3072.5 հազ.դրամ կամ կատարվել է 52.9%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 25.5% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 657.0 հազ. դրամ:
- **Այլ եկամուտներ**՝ նախատեսվել է 4264.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1207.0 հազ.դրամ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2023թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է հունվար ամսվա համար 126652.7 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Այնուհետ զեկուցողը ներկայացրեց եմ 2023 թվականի տարեկան բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքը ըստ առանձին համայնքների.

**Եղեգնաձոր համայնք.**

Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի **ընդամենը բյուջեն 01.02.2023 թ.-ի դրությամբ կազմում է 769430.5 հազ. դրամ:**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել է 702 714.9 հազ.դրամ, սեփական եկամուտներ պլանավորվել են **216 606.0 հազ. դրամ**, որը 2022 թվականի համեմատ, սեփական եկամուտներն ավել է պլանավորվել 602.7 հազ.դրամով կամ տարեկան պլանի աճը կազմում է 0.3%, մասնավորապես՝ գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 1103.0 հազ. դրամ կամ աճը կազմում է 18.1%, անշարժ գույքի հարկ՝ 2489.7 հազ. դրամ կամ աճը՝ 9.6%,գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 1550.0 հազ.դրամ:

- **Դոտացիան նվազել է 7.8% կամ 40182.7 հազ. դրամ:**

2023 թվականի հունվար ամսվա ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումն իրականացվել է 104.4 տոկոսով և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 2754.7հազ. դրամ կամ ավել է կատարվել 20.6%: /Համայնքի կողմից ներկայացվել է սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց/:

- **Անշարժ գույքի հարկ** առաջին ամսվա համար պլանավորվել է 1449.3 հազ. դրամ, տաստացի հավաքագրվել է **1947.8** հազ. դրամ, կատարվել է 134.4%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1072.7 հազ. դրամ:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ առաջին ամսվա պլանավորվել է 7550.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 8733.8 հազ. դրամ, կատարվել է 115.7%-ով: **Տեղական տուրքեր՝** 336.4 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 252.5 հազ.դրամ, կատարվել է 75.1%-ով:
- **Գույքի վարձակալություն՝** 580.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 720.9 հազ. դրամ, կատարվել է 124.3%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 531.8 հազ. դրամ:
- **Տեղական վճարներ՝** առաջին ամսվա համար նախատեսվել է 4045.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 3755.2 հազ. դրամ, կատարվել է 92.8 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1923.7 հազ. դրամ կամ աճը կազմում է 105.0%:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 1920.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1186.0 հազ.դրամ կամ կատարվել է 61,77%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 5.3 % կամ ավել է հավաքագրվել 252.9 հազ. դրամ:

**Ջերմուկ համայնք.**

Ջերմուկ համայնքի 2023 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 928683.0 հազ. դրամ:** Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **762980.91 հազ.դրամ**, աճը

նախորդ տարվա համեմատ կազմում է 120858.8 հազ. դրամ կամ ավել պլանավորումը կազմել է 18.8%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 446782.7 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 7802.6 հազ. դրամով կամ 1.8 տոկոս, որից, մասնավորապես, անշարժ գույքի հարկի մասով՝ 12278.6 հազ. դրամ, տեղական տուրքեր՝ 1651.0 հազ.դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 3942.0 հազ. դրամ, տեղական վճար՝ 2200.7 հազ. դրամ/:

Փետրվարի 1-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 44135.9 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 118.5 տոկոսն է: Աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 50.7% կամ ավել հավաքագրվել է 14839.6 հազ.դրամ:

- **Անշարժ գույքի հարկ՝ հունվար ամսվա համար պլանավորվել է** 4365.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **1556.9** հազ. դրամ կամ կատարվել է 35.7%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 55.4% կամ ավել է հավաքագրվել 555.1 հազ. դրամ:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ 4384.6 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 3790.0 հազ. դրամ, կատարվել է 86.4%-ով:
- **Տեղական տուրքեր**՝ 605.9 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 728.2 հազ.դրամ, կատարվել է 120.2%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 155.6 հազ. դրամ:
- **Գույքի վարձակալություն**՝ 17612.6 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 34113.5 հազ. դրամ, կատարվել է 193.7%-ով, փաստացի ավել հավաքագրված գումարը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար, կազմում է 16654.8 հազ. դրամ կամ աճը կազմում է 95.4%:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 9262.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 3682.0 հազ. դրամ, կատարվել է 39.8 %-ով:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 1570.4 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1240.0 հազ.դրամ կամ կատարվել է 79.0%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 29.4% կամ ավել է հավաքագրվել 281.9 հազ. դրամ:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է 937.7հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 96.0 հազ.դրամ:
- **Դոտացիան նվազել է 15.6% կամ 28691.9 հազ. դրամ:**

**Վայք համայնք.**

Վայք համայնքի 2023 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 802188.3 հազ. դրամ:**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են **750862.3 հազ.դրամ**՝ աճը, նախորդ տարվա համեմատ, կազմում է 42616.4 հազ. դրամ կամ ավել պլանավորումը կազմել է 6.0%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 297600.0հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 2923.6 հազ. դրամով կամ ավել պլանավորումը

կազմում է 1.0%, որից, մասնավորապես, գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 6000.0 հազ. դրամ, անշարժ գույքի հարկ՝ 781.1 հազ.դրամ:

Հունվար ամսվա ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 33593.1 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 135.5 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 13473.7 հազ. դրամ կամ աճի տոկոսը կազմում է 67.0%:

- **Անշարժ գույքի հարկ՝** հունվար ամսվա համար պլանավորվել է 1900.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **781.1** հազ. դրամ կամ կատարվել է 41.1%-ով:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ 5500.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5905.0 հազ. դրամ, կատարվել է 107.4%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 0.4 % կամ ավել է հավաքագրվել 22.6 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 833.3 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 811.0 հազ.դրամ, կատարվել է 97.3%-ով: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված գումարը կազմում է 148.3 հազ. դրամ կամ աճի տոկոսը կազմում է 22.4%:
- **Գույքի վարձակալություն**՝ 11750.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 24038.3 հազ. դրամ, կատարվել է 204.6%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 109.2% կամ ավել է հավաքագրվել 12547.6 հազ. դրամ:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 2466.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1420.8 հազ. դրամ, կատարվել է 57.6 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 355.9 հազ. դրամ կամ աճը կազմում է 33.4%:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 1041.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 386.3 հազ.դրամ կամ կատարվել է 37.1%-ով:
- **Դոտացիայի աճը կազմում է 7.1% կամ 23988.3 հազ. դրամ: /Խոշորացման արդյունքում Հերհեր և Կարմրաշեն համայնքները ներառվել են Վայք համայքում/:**

**<u>Արենի համայնք.</u>**

Արենի համայնքի 2023 թվականի **<u>ընդամենը բյուջեն կազմում է 546920.8 հազ. դրամ:</u>** Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **532027.8 հազ.դրամ**:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 172177.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 31139.6 հազ. դրամով կամ 22.1%-ով :

Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների 2023 թվականի հունվար ամսվա ընթացքում հավաքագրումը կազմում է 14308.1 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 114.7 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 6196.9 հազ. դրամ: Նշեմ նաև, որ Արենի համայնքը բյուջեն հաստատվելուց ներկայացրել է նաև սեփական եկամուտների հավաքագրման հաստատված ժամանակացուց: Մասնավորապես՝

- **Անշարժ գույքի հարկ՝** 677.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **1192.9** հազ. դրամ, կատարվել է 176.1%-ով, նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրումը կազմում է 446.8 հազ.դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** 4659.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5773.9 հազ. դրամ, կատարվել է 123.9%-ով, նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրումը կազմում է 1342.7 հազ.դրամ:
- **Տեղական տուրքեր՝** 683.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 678.1 հազ.դրամ, կատարվել է 99.2%-ով, նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրումը կազմում է 544.4 հազ.դրամ:
- **Գույքի վարձակալություն՝** 4994.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5423.6 հազ. դրամ, կատարվել է 108.6%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 3148.3 հազ. դրամ կամ աճը կազմում է 138.4%:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 1098.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 851.7 հազ. դրամ, կատարվել է 77.6 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 462.7 հազ. դրամ:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 230.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 144.6 հազ.դրամ կամ կատարվել է 62.9%-ով:
- **Դոտացիան նվազել է 4.9% կամ 16546.2 հազ. դրամ:**

**<u>Եղեգիս համայնք.</u>**

Եղեգիս համայնքի_2023 թվականի **<u>ընդամենը բյուջեն կազմում է 371668.1 հազ. դրամ:</u>**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **276727.7 հազ.դրամ:**

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 73300.0.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 3100.0 հազ. դրամով կամ ավել պլանավորումը կազմել է 4.4%:

Բյուջեին ամրագրված սեփական եկամուտներ հունվար ամսվա համար նախատեսվել է հավաքագրել 6108.3 հազ. դրամ, հավաքագրումը կազմում է 5605.2 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 91.8 տոկոսն է: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1201.1 հազ. դրամ կամ աճը կազմում է 27.3%:

- **Անշարժ գույքի հարկ՝** նախատեսվել է 850.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **723.5** հազ. դրամ, կատարվել է 85.1%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 97.2% կամ 356.7 հազ. դրամ ավել:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** 2400.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 3037.3 հազ. դրամ, կատարվել է 126.6%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 14.9% կամ ավել է հավաքագրվել 393.6 հազ. դրամ:

- **Տեղական տուրքեր՝** 83.3 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 58.4 հազ.դրամ, կատարվել է 70.1%-ով:
- **Գույքի վարձակալություն՝** 1066.7 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1569.3 հազ. դրամ, կատարվել է 147.1%-ով: Նախորդ տարվա համեմատ ավել է հավաքագրվել 700.2 հազ. դրամ:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 1041.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 115.6 հազ. դրամ, կատարվել է 11.1 %-ով:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 1041.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 115.6 հազ.դրամ կամ կատարվել է 11.1%-ով:
- **Դոտացիան նվազել է 6.0% կամ 12946.5 հազ. դրամ:**

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Հարկերի հավաքագրման լավ տեմպ ունենք, բայց առանձին հարկատեսակներ կան, որ թույլ է, քիչ գումարներ են հավաքագրվել: Ինչո՞վ է դա բացատրվում: Առանձնացրեք այն համայնքները, որտեղ հավաքագրման ամենացածր ցուցանիշներն են:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Առաջին ամսվա համար թույլ և ուժեղ հնարավոր չէ կանխատեսել, հիմնականում տեղական վճարներն են քիչ՝ աղբահանություն, տեղական վճարներ, տեղական տուրք և անշարժ գույքի հարկը: Ամենացածր ցուցանիշներ ունեն Վայք և Եղեգիս համայնքները:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Պարոն Մաթևոսյան Ինչո՞վ է դա բացատրվում:

**Պատասխան՝ (Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան)**

Դժվար է հավաքագրվում: Անցած տարի ահագին ավելացրել ենք հավաքագրումները նախորդ տարիների համեմատ:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Բոլոր ցուցանիշները, նույնիսկ եթե հավաքագրումների տոկոսները ցածր են, եթե համեմատում ենք նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ, ապա աճ կա:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Աղբահանության ծառայությունը մատուցվել է, սակայն հավաքագրման գումարները կազմում է 37%, ինչով է դա բացատրվում:

**Պատասխան՝ (Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան)**

Կանխիկ չի թույլատրվում հավաքագրել, բանկով էլ՝ բնակիչները չեն մուծում:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Ամենացածր ցուցանիշը Եղեգիս համայնքում է, աղբահանության համար գումարների հավաքագրումը կազմում է 11,1%:

**Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան)**

Մեր մոտ առկա է հետևյալ խնդիրը: Քանի որ բնակավայրերը իրարից հեռու են, պատշաճ աղբահանություն կազմակերպելու համար ցածր գնով մրցույթ հայտարարեցինք,

գումարը սահմանել ենք 11 միլիոն դրամ, սակայն մասնակցության հայտ չներկայացվեց: Պլանավորման պատճառով է, որ չենք կարողանում տոկոսները ապահովել, պլանավորված 12 միլիոն դրամի պարագայում, եթե նույնիսկ 100% հավաքագրում անենք ազգաբնակչությունից և գործող սուբյեկտներից, գումարը կկազմի 7,5 միլիոն դրամ:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

ՀՈԱԿ-ն ունեք, որի փաստաթղթերը ամբողջությամբ ուսումնասիրել եմ, մեքենաներ ունեք: Ինչու՞ սեփական միջոցներով չեք կազմակերպում աղբահանությունը:

**Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան)**

Աղբահանության մեքենա չունենք:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

ՈՒրիշ մեքենաներով աղբահանությունը կազմակերպեք: Ծառայության գնում եք կատարում, ՀՈԱԿ ունեք և գումար եք դուրս տալիս, հավաքագրված գումարներն էլ 11% է կազմում: Երկու տարվա պլանավորված գումարով կարող եք աղբահանության մեքենա ձեռք բերել:

**Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան)**

Այս տարի նախատեսել ենք ձեռք բերել:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Իսկ 7,5 միլիոնը ինչու չեք հավաքում:

**Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան)**

Հավաքելու ենք: Առաջին ամսվա համար բավականին գումար է հավաքվել: Տարվա Ստրվածքով ամբողջությամբ հավաքագրելու ենք:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Ձեր մոտ ի՞նչ խնդիրներ կան պարոն Սահակյան:

**Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան)**

Ասենք բնակիչը աղբահանության համար պետք է վճարի 500 դրամ: Վճարման համար պետք է գա հասնի Եղեգնաձոր, տրանսպորտի գումար, միջնորդավճար վճարի: Խնդիր ենք ունենում: Եթե նախկինում մեր աշխատողը գնում և գումարները գանձում էր, հիմա չի կարող:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հանձնարարեք Ձեր աշխատողը թող հավաքագրի գումարները, տանի անվանական բանկում մուտք անի:

**Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան)**

Այս դեպքում միջնորդավճարների վճարման խնդիրն է առաջանում, որը կազմում է 200-300 դրամ: Դրան հավելենք նաև ճանապարհածախսը:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Իսկ տերմինալների հարցի լուծումը ո՞ր փուլում է գտնվում: Այդ դեպքում էլ է միջնորդավճար գանձվում:

**Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան)**

Հիմա իրենց հետ մենք բանակցությունների մեջ ենք, որ 10 միլիոն գործարք անելու դեպքում, որոշ տոկոս մենք վճարենք, որպեսզի քաղաքացիներից միջնորդավճար չգանձվի:

**Հարց՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Հակոբյան**

Իսկ եթե հեռախոսի մեջ հավելված են քաշում և վճարումները դրանով են կատարում:

**Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան)**

Ոչ բոլորը կարող են անել: Տարիքով մարդիկ են:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Իսկ եթե համայնքապետարանի աշխատողը հեռախոսի հավելվածով անվանական վճարումները կատարի, լրացնելով քաղաքացու տվյալները, վերջում էլ նկարի ուղարկի հասցեատիրոջը:

**Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան)**

Այս դեպքում կանխիկ դրամի խնդիրն է առաջանալու, հավաքվելու է աշխատողի մոտ:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Այս հարցով նախարարի մոտ քննարկում ենք ունեցել, ներկայացրել ենք, որ գյուղական վայրերում անկանխիկ գործարքները չեն արդարացնելու, բայց Վարչապետի հանձնարարականը կա անկանխիկ գործարքների անցնելու վերաբերյալ:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Գոնե գյուղական բնակավայրերում մինչև 5000 դրամ գործարքները թույլատրվի կանխիկ արվի:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Մարզի խորհրդի նիստի արձանագրությունից կհանենք առանձին քաղվածքներ, հույժ կարևոր հարցերի վերաբերյալ լրացուցիչ կդիմենք նախարարությանը, որպես առաջարկ սահմանենք մինչև 10000 դրամ կանխիկ գործարքները թույլատրելու համար:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Եթե սահմանվի 3000-ից 5000 դրամ, դա էլ բավարար է խնդիրները լուծելու համար:

**Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան**

Տերմինալների հետ կապված, որ կառավարության որոշմամբ պետք է տեղադրվեն, մեկ ուրիշ խնդիր էլ կա՝ բնակիչների 90% քարտ չունեն: Հնարավոր չի կանխիկ վճարման տերմինալներ տեղադրվեն, թեկուզ մի քանի բնակավայրերում մի հատ: Հիմա, որ տեղադրում են, բանկերը առաջարկում են քարտերով աշխատող տերմինալներ:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Այդ հարցով բավականին աշխատանք ենք արել, դիմել ենք կառավարություն, ասել ենք, որ մարզում գյուղական համայնքների հետ կապված խնդրահարույց է: Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրի ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյանը:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Խնդիրը կա, բայց մենք շատ լավ համագործակցում ենք համայնքների հետ, վարչապետից համապատասխան հանձնարարական ստացել ենք, փոխանցել ենք մեր

համայնքներին և կառուցողական ինֆորմացիա ենք տրամադրել, թե ինչպիսի մեխանիզմներ պետք է կիրառել, որպեսզի վճարահաշվարկային սարքերը կարողանանք ունենալ թե՛ համայնքապետարաններում և թե՛ ենթակա կառույցներում: Բայց այսպիսի խնդիր կա, որ համապատասխան ծառայություններ մատուցող մեր բանկերը չունեն անհրաժեշտ քանակությամբ սարքավորումներ, ըստ էությամբ խնդիր ունենք մոտավորապես 80 միավոր սարք տեղադրելու, այդ քանակությունը մեր մասնաճյուղերը չունեն: Համայնքների գրությունների հիման վրա, որ հասցեագրել են բանկերի մասնաճյուղերին, իրենք էլ իրենց վերադասներին են տեղեկատվություն փոխանցել, որ նման պահանջարկ կա, ու հիմա գլխամասերում քննարկումներ է գնում վճարահաշվարկային սարքերի անհրաժեշտ քանակի խնդիրը լուծելու: Կա նաև հետևյալ խնդիրը, ասենք սարքը տանում տեղադրում ենք Սերսի վարչական ղեկավարի նստավայրը: Ողջ տարվա կտրվածքով շրջանառությունը կարող է լինել 80-ից 100 հազար դրամ, իսկ այսպիսի ֆինանսական շրջանառությունը ծառայություն մատուցող ընկերությանը ձեռնտու չի լինում: Շրջանառված 80000 դրամից կպահվի 0,3 տոկոս միջնորդավճարը և եթե սարքը տրամադրվում է անվճար, ֆինանսատնտեսական վերլուծության առումով ձեռնտու չի լինում դրանց տեղադրումը: ԵՎ նմանատիպ մի շարք խնդիրներ 6-7 կետով մենք բարձրաձայնել ենք և մարզպետի գրությամբ ներկայացրել ենք վարչապետի աշխատակազմ, հիմա սպասում ենք կանոնակարգումների: Ես խնդրում եմ համայնքների ղեկավարներին հնարավորինս համագործակցեն համապատասխան ծառայություն մատուցող ընկերությունների հետ, փորձենք մինչև մարտի մեկը խնդիրը կարգավորել:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Մինչև մարտի մեկը իրատեսական չի, որ այդ խնդիրները կլուծվեն: Մյուս հարցը միջնորդավճարներն են: Քաղաքացին 500 դրամ վճարում կատարելու համար, 300 դրամ էլ միջնորդավճար է վճարելու:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Ճիշտն ասած բանկեր կան, որ տեղեկացրել են 3-ից 5 տոկոս միջնորդավճարի փոխարեն քննարկում են 1,5-ից 1,8 տոկոս միջնորդավճար գանձելու հարցը: Ըստ էության այլընտրանք չկա, եթե ծառայություն է մատուցում միջնորդավճար պետք է տանի:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Քաղաքացին իրավունք ունի՞ դա չվճարի: Ասի իմ հարկը 500 դրամ է, ես վճարում եմ, իսկ միջնորդավճարը լրացուցիչ բեռ է, որը ոչ իրավաչափ է, չեմ վճարում: Ի՞նչ ենք անելու:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Այդ խնդիրը կա, համընդհանուր խնդիր է դա:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հանձնարարում եմ մարզի խորհրդի նիստի արձանագրությունը հանենք, ամբողջությամբ վերլուծենք, նորից դիմենք, ասենք, որ նախկին գրություններով ներկայացրել ենք առկա խնդիրները, մարզի խորհրդի նիստի ժամանակ բոլոր համայնքների ղեկավարները ներկայացրել են միջնորդավճարների ոչ իրավաչափ գանձման հարցը: Եթե

կենտրոնական բանկը այնպես կանի, որ անվճար ստանան, իսկ եթե չէ, մարդիկ ասում են, որ պարտավոր չեն բանկին 300 դրամ տալ: Պատկերացրեք՝ լույսից, գազից, ջրից, աղբահանությունից 300 դրամ և մնացած բոլոր հարկատեսակների համար միջնորդավճարը կկազմի ամսեկան 3000-ից 5000 դրամ: Մարդիկ կան 25000-30000 դրամ թոշակ են ստանում, որոնց համար այդ գումարները բեռ են:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում, եթե ցանկացած գործընթաց, որը նոր է և պետությունը համայնքին է պատվիրակում, պետք է համապատասխան ֆինանսական միջոցներ տրամադրի, բայց եթե անկեղծ խոսենք, մենք հիմա չունենք որևէ քայլ այդ ուղղությամբ և նաև հասկանում ենք, որ պետությունը չունի նմանատիպ ռեսուրսներ: Պետք է փորձենք այլընտրանքային տարբերակներով, քննարկումների միջոցով հարցերը լուծենք:

**Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Գաբրիելյան**

Նաև ուրիշ խնդիր կա, կապված վարչական շենքերի անմխիթար վիճակից, սարքերի պահպանման խնդիր կա:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Վարչական ղեկավարի նստավայրում կա աշխատասենյակ, որտեղ կա գույքեր: Այս պահին գույքի պահպանման խնդիր եք բարձրաձայնում:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Վարչական ղեկավարի սենյակում կարող է լինել աթոռ, սեղան, համակարգիչ և այլն, որոնք մեծ նյութական արժեք չեն ներկայացնում, բայց եթե գիտեն գյուղի փողը այդտեղ է, դա արդեն գայթակղիչ է:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Բայց այդտեղ կանխիկ գումար չկա, գյուղի հարկերն են անկանխիկ տեսքով: Կարծում եմ, որ այդ անկանխիկի պարագայում, սկզբնական փուլում, բոլորիս համար էլ դժվար էր: Կենսաթոշակառուների համար, որ քարտերով պետք է վճարումներ կատարեն, էլի սկզբնական փուլում դժվար էր, բայց քիչ քիչ հարմարվեցին դրան և դա մտավ մեր կենցաղ: Մենք մեկ այլ ճանապարհով քննարկում տանելու իրավունքն էլ չունենք: Կա օրենք, որ այդ բոլորը լինելու է անկանխիկ և դրա հիմնական նպատակը մեկն է, կանխիկ փողը շրջանառությունից հանելը: Այն, որ ասում են «սև» շրջանառություն՝ մաքրում ենք, ցույց ենք տալիս ռեալ իրավիճակը մեր մարզում ու ողջ հանրապետության կտրվածքով: Միայն համայնքային տնտեսությունների մասին չէ խոսքը, բոլոր պետական կառույցների մասին է խոսքը: Բոլոր գումարների շրջանառությունը պետք է լինի անկանխիկ: Հիմա խանութ մտնում ենք, վճարում ենք անկանխիկ, դրած է POS տերմինալը, քարտը տրամադրում ես, գումարը հաշվանցեց վերջացրեց, նույնը պետք է լինի ցանկացած գործունեության հետ կապված:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Բնակչության հետ պետք է աշխատենք, որ բանկային քարտեր հանեն:

**ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան**

Բանկերը տրամադրում են բավականին մատչելի գներով: Քարտի սպասարկման համար համապատասխան տոկոսներ է տանում, չնչին տոկոսներ են, մեծ տոկոսներ չեն:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Խնդիրը ֆիքսեցինք, հարգարժան գործընկերներ: Առաջարկում եմ դիմենք բանկերին, որ հարկերի, տուրքերի միջնորդավճարները չգանձվեն, բանկային քարտերի սպասարկումը դարձնեն անվճար, խոսքը իհարկե չի վերաբերվում GOLD քարտերին: Շնորհակալություն եմ հայտնում քննարկումների համար:

**Հարց (ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան)**

Եթե չեմ սխալվում Վայք համայնքը 140 տոկոսով էր կատարել սեփական եկամուտների հավաքագրումը, արդյոք հաշվետու ժամանակահատվածում ավտոմատ չի բերի եկամուտների նվազեցման:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Վերլուծությունը կատարվում է աճողական, պլանը ավելանալու է:

**Պատասխան՝ (Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան)**

Նախորդ տարվա պարտքերն ենք հավաքել:

**Հարց (ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան)**

Այսինքն մեխանիկորեն չի հանգեցնում հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար սեփական եկամուտների նվազեցմանը: Հաջորդ հարցը, եթե տիրապետում եք: Նկատի ունենալով, որ հիմա փոփոխություն է տեղի ունենում և համայնքային շահը պետական շահ է դառնալու, արդեն Ազգային ժողովը քննարկում է, և դա դատախազության վերահսկողության տիրույթ է գալու: Զուտ դրա հետ կապված կա տեղեկատվություն, որքան ունեն համայնքները կուտակված պարտքեր, ապառքներ և ինչ միջոցներ են ձեռնարկվել, կա արդյոք ժամանակահատված, ասենք տարուց ավել, որ համայնքները որևէ գործողություն չեն կատարել, օրենքով իրենց տրված գործիքակազմի կիրառմամբ, ապառքների հավաքագրման ուղղությամբ:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Չէ, այդպիսի բան չի լինում: Նախ համայնքները յուրաքանչյուր տարի բյուջեով կատարում են մուտքի, ելքի, ծախսերի, հարկերի, ըստ հարկատեսակների պարտքը, որը որպես ապառքներ կիրառվում է հաջորդ տարվա բյուջեի կազմի մեջ: Ասենք եթե 2022 թվականին չի կատարել այդ հարկատեսակից, չկատարված մասով ներգրավվում է հաջորդ տարվա պլանի մեջ, որ հավաքագրեն: Պարոն Մաթեոսյանը քիչ առաջ ասեց, որ նախորդ տարվա պարտքերը հավաքագրում են:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Պարոն Մաթևոսյանը ասաց, որ գյուղական համայնքներում աղբահանության համար չեն վճարում: Այսինքն ես զգում եմ, որ համայնքի ղեկավարը հույս չունի, օրինակ՝ Ազատեկ գյուղից աղբահանության գումարի վճարման հետ կապված: Ի՞նչ պետք է անի: Համայնքի ղեկավարը միջոցներ պետք է ձեռնարկի պարտքերի հավաքագրման համար: Եթե ֆիքսվեց համայնքի ղեկավարի կողմից անգործություն, միգուցե հնարավոր է ունենա քրեաիրավական

հետևանք: Օրինակ՝ ապառք ունեցող ֆիզիկական անձը մահացել է, իրավաբանական անձը լուծարվել է և իրավահաջորդ չունի, դա արդեն հաշվանցմամբ դուրս է գալիս և այդ ապառքը համայնքի բյուջեի վրա շարունակական չի մնում:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հանձնարարում եմ իրավաբանական բաժնի պետին գրություն ուղարկել բոլոր համայնքների ղեկավարներին, նշելով պարտքերի հավաքագրման նկատմամբ պաշտոնական անփութություն հանդես բերելու դեպքում հնարավոր քրեաիրավական հետևանքների առաջանալու մասին:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Խոսեցինք սեփական եկամուտների մասին, բայց դոտացիաների մասին խոսելու անհրաժեշտություն էլ կա: Դրան զուգահեռ այս տարի Խաչիկ բնակավայրում բացում ենք մանկապարտեզ, ընթացքի մեջ է Արենիինը և շուտով Ելփինինը: Մի մանկապարտեզ մեզանից տանում է մոտավորապես 20 միլիոն դրամ, ընդ որում միայն աշխատում են սեզոնին: Արդյունքում Արենի համայնքում մանկապարտեզների համար գումարը կազմում է 140-150 միլիոն դրամ, որը բավականին մեծ գումար է մեր համայնքի համար: Մանկապարտեզները պետք է լինեն պետական հոգածության ներքո, կամ էլ դոտացիաները հաշվարկելիս, որտեղ մանկապարտեզ կա, պետք հաշվարկվի դոտացիայի գումար պլյուս մանկապարտեզ: Առաջարկում եմ, որ դոտացիաների հաշվարկման կարգի մեջ հաշվի առնվի մանկապարտեզի առկայությունը և ինչ որ գործակից կիրառվի:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Համայնքները այդ հարցերը բարձրացրել են: Այդ առաջարկը ներկայացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Պահանջել են բազմաթիվ թվեր, հաշվարկներ: Ինձ թվում է այդ հարցը կվերանայվի: Իսկ հիմնականում դոտացիայի պակաս մասը հիմնավորվում է անշարժ գույքի դրույքաչափի փոփոխությամբ: Յուրաքանչյուր տարի անշարժ գույքի դրույքաչափը բարձրանում է:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հիմա բոլոր համայնքներում էլ դոտացիայի գումարի չափը պակասել է: Ինչո՞վ է հիմնավորվում, Ինչու՞ է պակասել:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Դոտացիայի հաշվարկը կատարվում է կենտրոնացված կարգով, կախված է բնակչության թվից, համայնքների ղեկավարների նախորդ տարվա ներկայացրած թվերից: Սա ծրագրային հաշվարկ է, կատարում է կառավարությունը: 2024 թվականի համար կառավարությունը ինֆորմացիան պահանջել է և մեր կողմից այն ներկայացվել է:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հանձնարարում եմ գրություն ուղարկել կառավարություն և տարածքային կառավարման նախարարություն, նշելով որ դոտացիաները բոլոր համայնքներում պակասել են, որպեսզի հստակեցնեն դոտացիաների նվազման պատճառները, նաև առաջարկություն

ենք ներկայացնում դոտացիաների գումարները հաշվարկելիս նկատի ունենան մանկապարտեզների առկայությունը:

**Զեկուցող՝** **Ա.Սարգսյան**

**Օրակարգի երկրորդ հարց՝ Գնումների համակարգի կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա.Սարգսյանին:

Համայնքների աշխատակազմերը, ենթակա կազմակերպությունները իրենց կարիքների համար անհրաժեշտ ապրանքները, ծառայությունները և աշխատանքները ձեռք են բերում գնումների միջոցով: Գնման համար հիմք է ծառայում հաստատված նախահաշիվը և հրապարակված գնումների պլանը:

Գնումները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ ՀՀ կառավարության որոշումներ, լիազոր մարմնի /ՀՀ ֆինանսների նախարարություն/ հրամաններ:

Ըստ ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման գնումների պատասխանատու են համարվում պատվիրատուի ղեկավարը /համայնքի ղեկավարը, կազմակերպության ղեկավարը/, ինչպես նաև իրենց վերապահված իրավասություններին համապատասխան՝

1. Գնումների համակարգողը,
2. Պատասխանատու ստորաբաժանումը,
3. Գնահատող հանձնաժողովը:

Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռք բերումը կատարվում է մրցութային և մեկ անձի գնման միջոցով: ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված 5 համայնքներից 3-ը համարվում են քաղաքային համայնքներ և գնումները կատարվում է էլեկտրոնային՝ armeps.am համակարգի միջոցով, 2 համայնքում գնումները կատարվում են թղթային ձևով:

Էլեկտրոնային համակարգի միջոցով գնումը հնարավորություն է տալիս հիմնականում բացառելու մարդկային շփումները, որը նվազեցնում է համակարգում գործող ռիսկերը:

Համակագում ռիսկերը բացառելու համար անհրաժեշտ է ունենալ խիստ մասնագիտացված և որակավորված պատասխանատուներ, անհրաժեշտության դեպքում պետք է հրավիրել մասնագետներ /առանձնապես սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման դեպքում/ և պետք է ապահովել օրենքի գերակայությունը:

Պատվիրատուն՝ գնումների բազային միավորը գերազանցող գնման ընթացակարգերի դեպքում սահմանված կարգի համաձայն և սահմանված ձևաչափերին համապատասխան կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն, հաշվետվություն և հրապարակում, իսկ գնումների բազային միավորը չգերազանցող գնման ընթացակարգերի դեպքում, սահմանված կարգի և ձևաչափերի համաձայն, կազմում է համապատասխան փաստաթղթերը և պահպանում դրանք:

Գնումների համակարգում ռիսկերը բացառելու համար մեծ նշանակություն ունի հանրային իրազեկումը, որը կարգավորվում է ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04- թիվ 526-Ն որոշման 50 և 50.1 կետերով: Մասնավորապես գնումների բազային միավորը գերազանցող գնումների դեպքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ ՀՀ-ում գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործակալություն ներկայացնող անձիք կարող են պատվիրատուին ներկայացնել կնքված տվյալ պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ: Հայտարարությունում նշվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն:

**Հարց (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Հիմա այդ ոլորտը անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Ի՞նչ դիրքորոշումներ ունեք, ի՞նչ ռիսկեր եք տեսնում, որպեսզի հետագայում խնդիրների առաջ չկանգնենք:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Ֆինանսների նախարարությունը որակավորված մասնագետներին երեք տարին մեկ պարբերաբար պետության հաշվին վերապատրաստում է գնումների համակարգողի: Համայնքների ղեկավարներին և մարզպետարանի ենթակա կազմակերպություններին միշտ գրություններ ենք գրում, որ համապատասխան մասնագետներին գործուղեն վերապատրաստումների:

Քաղաքային համայնքներում գնումների էլեկտրոնային համակարգ է: Աշխատեք, որ Ձեր պատասխանատու ստորաբաժանումներն էլ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների հիմնական հրավերին, տեխնիկական բնութագրի հիմնական մասին հետևողական լինեն, որպեսզի ուղղորդված չլինի, որ մեկ մարդ չմասնակցի: ՈՒղղորդվածությունը՝ նկատի ունեմ, այնպիսի պարամետրեր դնել, որոնք լայն մասսաներին գրավեն, որոնք փորձ ունենան, որոնք խնդիրներ չունենան: Իսկ ինչ վերաբերվում է օրենքում փոփոխություն է կատարվել, ապա կազմակերպությունները ներկայացնում են իրական շահառուներ, որտեղ երևում է փոխկապակցված անձերի մասին: Եթե Դուք որևէ խնդիր եք տեսնում, ապա հակակոռուպցիոն հանձնաժողովին նյութերը ուղարկում եք, իրենք ուսումնասիրում են և տալիս են եզրակացություն:

**Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան**

Ցանկացած մարդ կարող է մրցույթին մասնակցել: ԵՎ եթե էժան գին է առաջարկել, ես իրավունք չունեմ մերժեմ:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Ցանկացած անձ, օրենքով սահմանված կարգով կարող է իրացնել իր իրավունքը: Յուրաքանչյուրն ունի մրցույթին մասնակցելու իրավունք: Եթե Դուք տեսնում եք Ձեզ փոխկապակցված անձն է մասնակցել մրցույթին և առաջարկել է ամենաձեռնտու տարբերակը, փաստաթղթերը ներկայացնում եք հակակոռուպցիոն հանձնաժողովին, ասում եք, որ Ձեր հարազատ-բարեկամն է մասնակցել մրցույթին և հաղթել: Արդյոք կոռուպցիոն ռիսկ առկա՞ է, թե ոչ: Հանձնաժողովը ուսումնասիրում է փաստաթղթերը և եթե գտնում է, որ չկա կոռուպցիոն ռիսկ, ոչ մի խնդիր չի առաջանալու, իսկ եթե առկա է կոռուպցիոն ռիսկ, ապա տալիս է եզրակացություն, որի հիման վրա Դուք մերժում եք: Իսկ եթե չներկայացնեք հակակոռուպցիոն հանձնաժողով, հետագա ստուգումների արդյունքում պարզվի, որ կա կոռուպցիոն ռիսկ, քրեաիրավական հետևանք է ունենալու:

**Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան**

Որևէ կազմակերպություն, եթե հաղթող է ճանաչվում, մենք իրավունք չունենք ասենք, գիտես ինչ կա՝ հրաժարվի:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Դուք չեք ասում հրաժարվի: Եթե ասեք հրաժարվի, կարող են Ձեզ դատի տալ:

**Զեկուցող Ա. Սարգսյան**

Դուք չեք մերժում իրեն: Եթե տեսնում եք, որ խնդիր կա: Ինչու՞ են ասում փաստաթղթեր ներկայացրեք: Գնահատող հանձնաժողովը փաստաթղթերն ուսումնասիրում է և համակարգով գնահատում է կատարում: Կասեցնում եք գնահատման համակարգը, եթե Դուք տեսնում եք կոռուպցիոն ռիսկ, գրում եք, ոչ մեկը չի ասում հաջորդ օրը ինչու՞ չեք գնահատել, համակարգը թույլ է տալիս, Դուք գրում եք համապատասխան կազմակերպությանն և ասում եք, ես այստեղ խնդիր եմ տեսնում, ուսումնասիրեք և պատասխանեք: Եթե պատասխանը կտա, որ առկա է կոռուպցիոն ռիսկ, որ պետք է մերժվի, Դուք այդ մասով եք մերժում, գնով չեք մերժում: Կոռուպցիոն հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա մերժում եք հայտը և մտնում է համակարգ ինչ հիմքով մերժեցիք: Դուք չեք մերժում ոչ գնայինով, ոչ իր ներկայացրած փաստաթղթերի ճիշտ ու սխալով, որովհետև համակարգում կետեր կան, Դուք գնահատում եք ճիշտ՝ օրենքով: Գնման գործընթացին կարող են հետևել ոչ միայն մասնակիցները, այլ նաև լրատվությունը, հասարակական կազմակերպությունները, համակարգը այդ հնարավորությունը տալիս է:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Գյուղական համայնքներում հնարավոր չէ՞ անցնել էլեկտրոնային համակարգի:

**Զեկուցող Ա. Սարգսյան**

Այդ հարցը մենք բարձրացրել ենք Ֆինանսների նախարարությունում հանդիպումների ժամանակ, որ բոլորը գնան աճուրդի:

Թղթային համակարգում ռիսկը ավելի մեծ է: Ծրագրային ապահովումն երևի տեխնիկական խնդիր է:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Գալիս են, ներքևում իրար հետ պայմանավորվում են ու մտնում, դե արի պատասխան տուր:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Համայնքը չի՞ կարող իր առաջարկությամբ գնա էլեկտրոնային աճուրդի:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Չէ, չի կարող: Հիմա կուզենամ համայնքներին մի առաջարկություն անել: Ելնելով սուբվենցիոն ծրագրերից, հիմնականում խնդիրներ առաջանում են նախագծանախահաշվային փաստաթղթերի մրցույթների արդյունքները ընդունելուց: Ձեր պատասխանատու ստորաբաժանման, գնահատող հանձնաժողովի կազմում խիստ մասնագետների հրավիրեք, ուղղակի գնահատման պահին: Հետո պարզվում է, որ նախագծանախահաշվային փաստաթղթերում թերություններ կան: Հրավիրեք դրսից մասնագետներ, հետագա խնդիրներից խուսափելու համար:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Կոնկրետ տարածքային կառավարման մարմինները ընթացիկ վերահսկողական գործառույթներ ունեն՞: Բնականաբար մարզպետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների նկատմամբ ունեն: Կոնկրետ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապված ուսուցողական բնույթի եղավ այդ հարցը, որ խորհուրդ տվեցիք:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Մարզպետարանը իրավասություն չունի պատվիրատուների գործունեությունը ստուգելու, իրավասություն ունի միայն հրապարակման ենթակա նյութերը հրապարակելու, այն համայնքներինը, որոնք որ իրավունք չունեն իրենց նյութերը հրապարակելու: Քաղաքային համայնքները իրենք իրենց նյութերը հրապարակում են, այդ հասանելիությունը իրենք ունեն, մենք հրապարակում ենք այն կազմակերպություններինը, որոնք որ իրավունք չունեն հրապարակելու, այդ իրավունքը տրված է մարզպետարանին: Նյութերը պատրաստում է պատվիրատուն, ուղարկում է մարզպետարան, մենք հրապարակում ենք համապատասխան կայքում: Ստուգելու, սխալ գտնելու իրավասություն մենք չունենք: Պատասխանատու է իր գնման գործընթացի համար պատվիրատուի ղեկավարը, լինի ՊՈԱԿ, ՀՈԱԿ, թե համայնք: Մենք միայն նյութերի հրապարակման իրավասություն ունենք: ՈՒղղակի մենք որևէ սխալ նկատելուց մեթոդական օգնություն ենք ցույց տալիս, սա է մեր գործունեությունը:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Ասեցիք, որ Ֆինանսների նախարարությունում ինքներդ եք վերապատրաստում անցել: Ենթադրենք օրենքի ակնհայտ խախտմամբ պայմանագիր է Ձեր մոտ հասու դարձել: Հրապարակման գործառույթ իրականացնելիս քանի՞ հատ խախտմամբ պայմանագիր եք հայտնաբերել:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Ես իրավասու չեմ հայտնաբերելու:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Պարոն Ավետիսյանը ասում է, օրինակ՝ ասենք տեսնում եք միլիոն դրամը գերազանցում է, պետք է գնման մրցույթ հայտարարեին: Ձեզ մոտ փաստաթուղթ է հայտնվել, որ չի հայտարարվել այդ մրցույթը, հիմա հրապարակում եք, թե ասում եք ինձ հետաքրքիր չի: Հրապարակելն է միայն իմ գործառույթը, թե ինչ-որ մի գործառույթ էլ ունեք:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Հրապարակվող նյութը, ենթադրենք կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվում է, գրվում է մրցույթի ձևը, գնման առարկան, եթե մրցույթի ձևը գրված է մրցակցային:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Կարող է գնումը կատարվի մեկ անձով:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Չի կարող այդպիսի բան լինի, որովհետև իրենք գնումների պլան ունեն: Ես չեմ կարող այդպիսի սխալ գտնել կամ իմանալ:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Բայց Դուք եք վերապատրաստվել, Դուք եք հրապարակում: Խնդիրը գիտեք ինչումն է: Նախ համաձայն չեմ Ձեզ հետ, որ կոռուպցիոն ռիսկը միայն բացառապես գնման նախորդիվ փոլում է, ո՛չ, կոռուպցիոն ռիսկը ամբողջ պրոցեսը կարող է լինել:Կարող է ռիսկը սկզբում ձևավորվի, վերջին գործողության ժամանակ նոր մարդիկ իրենց ակնկալիքն ունենան: Եթե Դուք ի սկզբանե իրենց խախտումն տեսնում եք, դրա ուղղելը, հետևաբար նաև կանխելը Ձեր արձագանքի դեպքում ինչի կարող է հանգեցնել: Ընդ որում, արդեն պետական մարմինները, մարզպետարանները, ցանկացած վերահսկողական գործառույթ իրականացնող մարմին, առերևույթ հանցանքի փաստ հայտնի դառնալու դեպքում պետք է հաղորդում ներկայացնի: Դուք գործառույթ եք իրականացնում, կոնկրետ տեղական, գյուղական համայնքների գնումների գործընթացի հրապարակումների հետ կապված, Ձեր վրա է դրված այդ պարտականությունը:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Հրապարակող կազմակերպությունը, անկախ դա լինի մարզպետարան, թե մեկ ուրիշը, պարտականություն դրված չէ ստուգելու սխալը կամ ճիշտը, պարտավոր ենք նյութը հրապարակել:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Դուք եք վերապատրաստվել, Դուք եք կոմպիտենտ մասնագետ, եթե տեսնում եք ի սկզբանե խախտում ունի, չպիտի թողնեք հասնի վերջնախախտման, արդյունքն էլ մեծանա, նոր դրա մասին արձագանքեք:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Այստեղ ամբողջ պատասխանատվությունը, ամբողջ հիմքը, ես սկզբից էլ ասացի, նախահաշիվն է: Բյուջեն հաստատելուց հետո, կազմում են գնումների պլան և այդ գնումների պլանը հրապարակվում է: Այդ գնումների պլանում նշվում է գնման ձևը:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Ես կարող եմ արդյոք արձանագրել մի բան, որ Ձեր կոնկրետ այս գործառույթի իրականացման ընթացքում, Ձեզ և տարածքային կառավարման մարմնին հասանելի եղել է որևէ առերևույթ խախտում:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան)**

Ոչ: Հասանելի չի եղել:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Շնորհակալություն:

**Զեկուցող՝** **Ա.Սարգսյան**

**Օրակարգի երրորդ հարց՝ Համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումների վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանին:

Զեկուցողը ներկայացրեց համայնքների ավագանիների որոշումներում վերջին շրջանում հաճախակի հանդիպող թերությունները:

ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի հունիսի 17-ին ընդունվել է «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» թիվ 987-Ն որոշումը, որի համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայնի որի՝ գյուղատնտեսական հողատեսքերը ենթակա են հատուկ պահպանության: Այդ հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի թույլատրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում:

Գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխության յուրաքանչյուր դեպք պետք է հիմնավորված լինի և համապատասխանի Կառավարության նշված որոշման պահանջներին, իսկ որոշումներն անպայման պետք է հղում կատարեն որոշման կոնկրետ կետին, որը որ կարգավորում է տվյալ դեպքը:

Հաճախակի դարձած սխալներից են որոշումներում հողերի, ըստ օգտագործման բնույթի, դասակարգումների սխալ նշումը: Մասնավորապես, գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողատեսքի փոխարեն նշվում է գործառնական նշանակություն կամ բնակավայրերի նպատակային նշանակության դեպքում՝ հողատեսք: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում որոշումների գրագետ կազմմանը հետևելուն, քանի որ

երբեմն նպատակահարմար էլ չի լինում նման խմբագրական թերությունների համար մարզպետի գրությամբ ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշումներում փոփոխությունների կատարելու առաջարկ ներկայացնելը:

Գրեթե բոլոր համայքներում հանդիպող թերություններից է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմման կարգի խախտումը: ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն: Նման պարագայում անհրաժեշտ է նախ համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը (ընդգրկվող անդամների ցանկը), ապա ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը: Ավագանու որոշմամբ արդեն սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

Սովորաբար չի պահպանվում համայնքի ղեկավարի կողմից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու առաջին քայլը, ապա նոր՝ ավագանու հաստատմանը ներկայացնելը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն աշխատակազմի քարտուղարը ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում: Օրենքի նշված պահանջը երբեմն խախտվում է աշխատակազմի քարտուղարի կողմից, ինչը կարող է հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության համար:

Կրկնվող թերություններից է սխալ հղումները, որոնք չեն կարգավորում որոշման առարկան, ավագանին որոշել է ընդերքօգտագործման նպատակով առանց մրցույթի վարձակալության տրամադրել հողամասեր՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշմանը: Նշված որոշման վերնագրից արդեն իսկ պարզ է, որ ընդերքօգտագործման նպատակով տրամադրվող հողամասերի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման հետ առնչություն ունենալ չի կարող:

Ձեր ուշադրությունն ենք ուզում հրավիրել նաև հասցեավորման որոշումներին, տարածված վրիպում է դարձել համայքնների մեջ մտած վարչատարածքային միավորները հասցեավորման ժամանակ նշել որպես բնակավայր, մինչդեռ՝ համաձայն «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության համայնքների և նրանց կազմում ընդգրկված բնակավայրերի ցանկի՝ բնակավայրերի անվանումները նշվում են որպես քաղաք կամ գյուղ: Հետևաբար՝ հասցեավորման վերաբերյալ որոշումներում անհրաժեշտ է նշել բնակավայրի տեսակը, որպես քաղաք կամ գյուղ:

Հանդիպում են դեպքեր, երբ համայնքային սեփականության հողամասերն աճուրդով օտարելիս օտարվող հողամասերի մակերեսը պակաս է թույլատրելի մեկ միավորի չափից:

Խնդիրներ են առաջանում նաև արոտավայրերը օգտագործման տրամադրելու որոշումների օրինականությունը ստուգելիս: Հանդիպում են դեպքեր, երբ մեծ մակերեսներով արոտավայրեր են պարզեցված կարգով տրամադրվում օգտագործման, և հենց մակերեսների մեծությունն էլ կասկած է հարուցում համապատասխան անասնագլխաքանակի առկայության վերաբերյալ: Հորդորում ենք պահպանել սահմանված նորմերը և հողամասերը օգտագործման տրամադրել բոլոր հիմնավորող փաստաթղթերի առկայության պարագայում:

**Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան**

Արոտավայրեր ունենք, որ ընդհանրապես այդտեղ անասուն չի մտել, չի էլ մտնելու, բայց ինքն որպես արոտավայր է:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

20 հա հողամաս կա, որի կենտրոնում 2000 քմ արոտ է, մարդը չի կարողանում այդտեղ ինչ-որ բան անել:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Եթե այդպիսի դեպքեր կան, բացառիկ դեպքերում ներկայացնում եք՝ փոխում ենք: Եթե ձկնաբուծարանը պետք է լինի չնախատեսված տեղում գյուղատնտեսական նշանակության հող՝ չենք անելու: Կարող եք այլ տեղ առաջարկել, որպեսզի բիզնեսին ընդառաջենք: Ասում է ուզում եմ խոզաբուծարան կառուցել, ասում ենք, եթե խոզաբուծարան կառուցես խոտ է, խոզի կեր է, տեղափոխել է, արտաթորանք է, այսքան մարդու շրջապատում կխանգարես, բայց չենք էլ ասում մի սարքեք, կլինի այդ խոզաբուծարանը մեկ այլ տեղում սարքես: Այլընտրանքը սա է:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Հիմա սեփական հողի վրա է ուզում կառուցել:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Ինչ է նշանակում սեփական հողի վրա, բերենք Եղեգնաձորի կենտրոնում խոզաբուծարան կառուցենք, կլինի՞: Դրա համար կա մարզպետ, կա համայնքի ղեկավար: Ներդրումային ծրագիր կա, քննարկեցինք, որոշեցինք, այստեղ կարող է լինել, արեցինք: Ամեն հարցին լուծում կա:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Տան անդամներով գնացել աշխատել են, 50 միլիոն դրամ փող են բերել, որպեսզի ներդրում անեն, չենք ընդառաջում: Ինչքանով է ճիշտ:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Հիմա պիտի ասենք, այդ 50 միլիոնը բերել ես, քո կողքին ենք, այստեղ հարմար չի, այլ տեղում ենք առաջարկում, հարմար է քեզ: Եթե պետք է հողն էլ նվիրենք կամ կես գնով տանք, բայց այնպիսի տեղում անենք, որ մարդկանց չխանգարի:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Արենի համայնքում գյուղատնտեսական նշանակության հողի փոփոխության հետ կապված, կառավարության որոշմամբ և հողային օրենսգրքով չէր նախատեսում: Դուք մենակ փաստաթղթային մասն եք ստուգել և ասել եք չի համապատասխանում, իսկ ակնադիտական եղանակո՞վ: Չէ որ մարզպետարանը ունի նաև հողերի նպատակային նշանակության, օգտագործման նկատմամբ վերահսկողություն: Ձկնաբուծարան կառուցելուն էլ նախորդում են շինարարական աշխատանքներ: Սեփական տարածքում կարո՞ղ է ապօրինի շինարարություն էլ կատարված լինի:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Մենք չենք կարող ասել: Դեռ նախնական քայլերն են: Առաջին հերթին կատարվում է հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, որի հետ միասին տրվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի թույլտվությունը:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Շատ ժամանակ նախօրոք սարքում են, հետո գալիս են օրինականացնում: Պարոն Սահակյան այնտեղ կատարվե՞լ են շինարարական աշխատանքներ:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Չէ, չեն կատարվել: Հիմա տեսեք խնդիրն ինչումն է: Մարդու սեփական հողն է: Ինչքան եկամուտ է ստանում: Այսօր հարյուրավոր, ես կասեի հազարավոր հեկտարներ չի մշակվում: Ցանում են, իրեց ցանածն էլ չեն ստանում: Ստիպված մի բան պետք է անեն, դրա համար եմ ասում իր սեփական հողն է, ինքն ավելորդ դրա հարկն է տալիս: Այդ խնդիրն էլ կա:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Օրենքի կարգավորման նպատակը նրանում է, որ մեր գյուղատնտեսական նշանակության ֆոնդը չափազանց քիչ է:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Բոլորս էլ գիտենք, որ հողերի մշակման խնդիր ունենք, բայց մենք առաջ ենք նայում: Նպատակը գյուղատնտեսական նշանակության հողային ֆոնդի պահպանումն է, որովհետև վաղը, մյուս օրը դրանք կմշակվեն: Այլընտրանք առաջարկենք, եթե տեսնենք այլ տարբերակ չկա, փորձենք բիզնեսին չթողնենք հեռանա և այո, եթե մարդը չի կարողանում սեփական հողը մշակել, դա խնդիր է:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Որոշումն ընդունվել է 2021 թվականին: Արդեն կիրառման ժամանակ, հավանաբար առաջացած խնդիրները հասել են կառավարություն, որովհետև մի քանի ամիս առաջ մեզանից պահանջում էին օրենքի դրույթների լավարկման նպատակով ներկայացնենք առաջարկություններ: Մենք հաշվի առնելով համայնքներում առաջացած նմանատիպ խնդիրները, մեր առաջակությունները գրել ենք և ներկայացրել: Մինչև այս պահը որևէ փոփոխություն չկա, բայց հավանաբար, քանի որ խնդիրը կա, բարձրացվել և հասել է

մարզպետարան և համայնքներ, ուրեմն ակնկալվում է նաև փոփոխություններ: Ձեր հարցերը և դիտարկումները տեղին են, բացառությունները խիստ սահմանափակ թվով են դրված:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Կա՞ն սահմանային չափով, որ քիչ օտարում է եղել, բայց դրանցով պետական գրանցում է եղել, թե յոթ օրվա ընթացքում հասցրել եք տաք համայնքներին ուղղման, համայնքները չեղյալ են համարել:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Յոթ օրվա ընթացքում համայնքների պարտականությունն է մարզպետարան առաքելը: Մենք մեկ ամսյա ժամկետ ունենք ուսումնասիրելու և իրենց դիմելու, իրենք էլ մեկ ամսյա ժամկետ ունեն անվավեր ճանաչելու կամ էլ մեր դիրքորոշմանը չհամաձայնելու: Հիմնականում անվավեր են ճանաչվում օրենսդրությանը չհամապատասխանող որոշումները:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Ո՞նց կարող են անվավեր ճանաչել, եթե դրան հաջորդող Կադաստրի կոմիտեն պետական գրանցում է կատարել:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Մեզր մոտ նախնական գալիս են աճուրդ հայտարարելու մասին որոշումները:

**Զեկուցող՝ Ն. Մաղաքյան**

**Օրակարգի չորրորդ հարց՝ Համայնքներ ուղղված գրությունների վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ն.Մաղաքյանին:

Զեկուցողը ներկայացրեց համայնքներ ուղղված գրությունների պատասխաններում առկա թերությունների, ինչպես բովանդակության, այնպես էլ ժամկետով գրությունների ժամկետների պահպանմանը առումով:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Ամենաշատ խնդիրները որ համայնքում են:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Այս պահին հաշվի առնելով, որ Վայք համայնքի աշխատակազմի քարտուղարը համեմատական նորանշանակ է, խնդիրները այդ համայնքում են:

**Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան**

Բայց հիմա արդեն խնդիր չկա չէ՞: Նախկինում կար, բայց հիմա չկա:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

Եթե Դուք նախկին նկատի ունեք երկու շաբաթ առաջ, ես ասում եմ, որ մեկ ամսվա կտրվածքով խնդիրը կար: Ինչպես նշեցի գրությունները ուղարկվում է, մեր վրա ժամկետներ կան, մենք էլ մեր հերթին ժամկետ ենք դնում, ուրեմն պետք է նշված ժամկետում պատասխանը ստանանք, սակայն ստանում ենք ուշացումներով: Կամ պահանջվում է հստակ

տեղեկատվություն, պատասխանը գալիս է դիտողություններ, առաջարկություններ չունենք: Համայնքապետարանի հաջողության 90 տոկոսը կախված է աշխատակազմի քարտուղարի աշխատանքից:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**

Այսինքն, մենք տեղեկատվություն ենք ուզում, իրենք գրում են, որ դիտողություններ և առաջարկություններ չունեն:

Տիկին Մաղաքյան, պատրաստում եք գրություն համայնքի ղեկավարին ուղղված, կցում եք այդ կարգի բոլոր գրությունները և դրանց պատասխանները, համայնքի ղեկավարի ուշադրությունն եք հրավիրում այս փաստերով առկա խնդիրներին: Մենք ուզում ենք, որ մեր գործերը իդեալական լինեն: ՈՒրիշ ի՞նչ խնդիրներ կան:

**Պատասխան՝ (զեկուցող Ն. Մաղաքյան)**

ՈՒրիշ այլ խնդիրներ չկան: Հիմնականում կարողանում ենք աշխատակազմերի քարտուղարների մակարդակով լուծել առաջացած խնդիրները:

**Առաջարկվեց համայնքի ղեկավարներին.**

Հանձնարարել համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին՝

- Համակարգով գրությունները ելք անելիս հստակ նշել, թե ինչի մասին են դրանք, հակառակ դեպքում ուղարկվող բոլոր նյութերն ունեն «գրություն» անվանումը, մինչդեռ վերնագիրը պետք է հակիրճ տեղեկատվություն պարունակի գրության բովանդակության մասին, խոսքը մասնավորապես վերաբերվում է ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշումների կից գրությունների վերնագրերին:
- Հետևել մարզպետի ժամկետով գրությունների ժամկետների պահպանմանը,
- Ուշադիր լինել գրությունների պահանջներին և պատասխանել ըստ էության՝ հնարավորության սահմաններում ներկայացնելով Ձեր տնօրինման տակ եղած տեղեկատվությունը:
- Մարզպետի գրությամբ ստացված դիտողությունների և առաջարկություններին համաձայն չլինելու դեպքում գրությամբ պատասխանել, հայտնել Ձեր դիրքորոշումը:

**Զեկուցող՝ Ն. Մաղաքյան**

**Օրակարգի հինգերորդ հարց՝ 2022 և 2023թթ. սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը ձայնը տվեց մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա. Կոստանյանին:

Զեկուցողը հայտնեց, որ **2022թ.** համար մարզի համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել **34 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 9 ծրագիր, **Ջերմուկ՝** 4 ծրագիր, **Վայք՝** 8 ծրագիր, **Արենի՝** 6 ծրագիր, **Եղեգիս՝** 7 ծրագիր)՝ **3 մլրդ 174,9 մլն ՀՀ դրամ** արժողությամբ,

**որից 1 մլրդ 343,7 մլն ՀՀ դրամը կամ 42,3 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ 831,2 մլն ՀՀ դրամը կամ 57,7 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

2021 թվականին հաստատված «Գլաձոր համայնքի 11-րդ փողոց, թիվ 9 հասցեում գոյություն ունեցող մշակույթի տան վերահատակագծում և կցակառույցի իրականացում» ծրագիրը տեղափոխվել է 2022թ.:

2022 թվականի սուբվենցիոն ծրագրերն իրականացվել են մի շարք ոլորտներում, մասնավորապես՝

- խմելու ջրամատակարարում, ջրահեռացում,
- ոռոգման համակարգերի կառուցում-նորոգում,
- բնակավայրերի փողոցների կառուցում-նորոգում,
- փողոցային լուսավորության համակարգի կառուցում-նորոգում,
- բնակավայրերի գազաֆիկացում,
- նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում,
- համայնքային ենթակայության շենք-շինությունների կառուցում/ վերանորոգում:

Վերոնշյալ հայտերի շրջանակներում համայնքների կողմից ներկայացվել են **30 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ, որոնցից երեք փաթեթ լրամշակման ժամկետների սղության պատճառով ներկայացվելու են 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից պայմանով և առանց պայմանի հաստատվել են **27 ծրագիր՝ 3 մլրդ 825,7 մլն ՀՀ դրամ** արժողությամբ /ըստ հաստատված հայտերի/, **որից 1 մլրդ 685,9 մլն ՀՀ դրամը կամ 44,1 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 139,7 մլն ՀՀ դրամը կամ 55,9 %-ը՝ սուբվենցիայի գումարն է**:

1. **Եղեգնաձոր համայնք**

Եղեգնաձոր համայնքում հաստատվել է **9 ծրագիր՝ 1 342 403 792 ՀՀ դրամ արժողությամբ, որից 7 ծրագրի /881 395 072 ՀՀ դրամ/** շրջանակներում **/բացառությամբ 3 ենթածրագրերի/** շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ **2 ծրագիր /461 008 720 ՀՀ դրամ/** տեղափոխվել են 2023թ.:

- Եղեգնաձոր բնակավայրի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգում,
- Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում,
- Եղեգնաձոր բնակավայրի 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրի կից տարածքի բարեկարգում,
- Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում /ծրագիր/,
- Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Գլաձոր և Գետափ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում /ծրագիր/

2. **Արենի համայնք**

Արենի համայնքում հաստատվել է **6 ծրագիր՝ 1 147 841 019 ՀՀ դրամ արժողությամբ, որից 4 ծրագրի /589 810 849 ՀՀ դրամ/** շրջանակներում **/բացառությամբ 4 ենթածրագրերի/** շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ **2 ծրագիր /558 030 170 ՀՀ դրամ/** տեղափոխվել են 2023թ.:

- Արփի բնակավայրում երիտասարդական կենտրոնի/նախկին ճաշարանի շենք/մասնակի հիմնանորոգում,
- Աղավնաձոր բնակավայրում Սահրատի աղբյուր ջրաղբյուրի կապտաժի և ջրագծի արտաքին ցանցի 80գծմ հատվածի կառուցում,
- Ելփին բնակավայրում Գասպարի աղբյուր ջրաղբյուրի կապտաժի և ջրաբաշխիչ հորի համար շինության կառուցում,
- Ելփին բնակավայրում Դիդիվան ջրաղբյուրի 4 կապտաժների կառուցում և ջրագծի արտաքին ցանցի մացնակի նորոգում,
- Արենի համայնքի Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում,
- Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում փողոցների ասֆալտապատում /ծրագիր/

3. **Եղեգիս համայնք**

Եղեգիս համայնքում հաստատվել է **5 ծրագիր՝ 336 333 740 ՀՀ դրամ արժողությամբ, որոնց** շրջանակներում շինարարական աշխատանքներն ավարտվել են:

4. **Վայք համայնք**

Վայք համայնքում հաստատվել է **5 ծրագիր՝ 803 661 460 ՀՀ դրամ արժողությամբ, որից 4 ծրագրի /727 646 740 ՀՀ դրամ/** շրջանակներում **/բացառությամբ 4 ենթածրագրերի/** շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ **1 ծրագիր /76 014 720 ՀՀ դրամ/** տեղափոխվել է 2023թ.:

- Հերհեր բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատում,
- Գոմք բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում,
- Բարձրունի բնակավայրի ոռոգման ջրի ջրագծի, գլխամասային կառույցի արտաքին ցանցի հիմնանորոգում,
- Շահումյան փողոցի ասֆալտապատում,
- Վայք քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի, Ջերմուկ խճուղու, Փոռ բնակավայրի, Սարավան-Սարալանջ բնակավայրի գազատարեր տեղադրելու աշխատանքներ /ծրագիր/

5. **Ջերմուկ համայնք**

Ջերմուկ համայնքում հաստատվել է **2 ծրագիր՝ 195 502 900 ՀՀ դրամ արժողությամբ, որոնց** շրջանակներում շինարարական աշխատանքներն չեն ավարտվել, և ծրագրերը տեղափոխվել են 2023թ.:

- Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգու բարեկարգման աշխատանքներ, Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների պուրակի բարեկարգման աշխատանքներ /ծրագիր/,
- Ջերմուկ համայնքի կարիքների համար մեքենասարքավորումների ձեռքբերում /ծրագիր/

Ընդհանուր առմամբ՝ **27** սուբվենցիոն ծրագրերից՝

- **20** ծրագրերի շրջանակներում շինարարական աշխատանքներն ավարտվել են,
- **4** ծրագրեր չեն իրականացվում, տեղափոխվել են 2023թ:
- **3** ծրագրերի շրջանակներում աշխատանքներն սկսվել են և ընթացքի մեջ են:

2022 թվականին 27 ծրագրից **18 սուբվենցիոն ծրագիր՝ 1 մլրդ 329,3 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 550,8 մլն ՀՀ դրամը կամ 41,4 %-ը համայնքների ներդրումն է, 778,5 մլն ՀՀ դրամը կամ 58,6 %-ը՝ սուբվենցիայի գումարն է**, ներկայացվել է պետական բյուջեից ֆինանսավորման: 2023 թվականին ևս **2 ծրագիր** է ներկայացվել պետական բյուջեից ֆինանսավորման:

Կառավարության որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին 2022 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար տրամադրվել է **771 015 900 ՀՀ դրամի սուբվենցիա**:

**<u>2023թ. սուբվենցիոն ծրագրեր</u>**

**2023 թ.** համար մարզի համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել **29 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 1 ծրագիր, **Ջերմուկ՝** 4 ծրագիր, **Վայք՝** 12 ծրագիր, **Արենի՝** 7 ծրագիր, **Եղեգիս՝** 5 ծրագիր)՝ **4 մլրդ 362,2 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 1 մլրդ 911,3 մլն ՀՀ դրամը կամ 43,8 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 450,9 մլն ՀՀ դրամը կամ 56,2 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի N 940-Ն որոշման համաձայն՝ վերոնշյալ հայտերի շրջանակներում համայնքները հասցրել են ներկայացնել **8 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ, որոնցից **4 ծրագիր** արդեն հաստատվել են ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, **մեկ ծրագիր** չի հաստատվել, մնացյալ **3 ծրագրերի** ամբողջական փաթեթները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Հիմա ասեք: Ի՞նչ ենք արել, ի՞նչ է մնացել պակաս, որտեղ քանի՞ ծրագիր է պակաս, ի՞նչ խնդիրներ կան:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Եղեգնաձոր համայնքում, Եղեգնաձոր բնակավայրի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգումը հետաձգվել է համայնքի ֆոնդային բյուջեի դեֆիցիտի պատճառով: Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում, Եղեգնաձոր համայնքի Գետափ գյուղում ասֆալտապատում, Եղեգնաձոր համայնքում 1941-1945թթ. հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրի կից տարածքի բարեկարգում՝ տեղափոխվել են 2023 թվական:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Գետափ գյուղում ասֆալտապատումը ո՞ր հատվածում է:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Համաշխարհային բանկով որ արեցինք, դրա շարունակությունն է: Գյուղի կենտրոնի խանութի մոտով բարձրանում է դեպի գերեզմանոցի տարածք:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Բացառությամբ Ջերմուկի, ասեցիք հայտնի դեպքերի հետ կապված: Այսինքն տենդերը հայտարարվում է, կապալառուն պայմանագրով նախատեսված ժամկետում չի կատարում, դրա համար տեղափոխում եք հաջորդ տարի:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելուց հետո, եթե պատճառներն օբյեկտիվ են՝ եղանակային պայմաններ, որոշակի խնդիրներ, շինարարը չի հասցրել, այդ դեպքում մենք գրավոր դիմում ենք կառավարությանը, կառավարությունը միայն կարող է ժամկետ երկարացնել: Համայնքը կարող է մեկ ամիս մի անգամ երկարացնել, բայց դա չի հերիքում: Երկարաձգելու պատճառը հիմնականում սուբվենցիոն ծրագրերը աշնանը սկսելն է, դրա համար կարգը փոխվեց, արդեն հուլիսից են հայտերը ներկայացնում մինչև տարվա վերջ կարողանում են հասցնել, մրցույթները տարվա սկզբում են հայտարարվում: Իսկ նախկին կարգով ամառը հաստատվում էր, մինչև մրցույթներ, հաղթող և այլն, գալիս ընկնում էր աշուն, կապված նաև բարձրադիր գոտու հետ, այդ պատճառով չէին կարողանում ավարտել:

**ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազ Ա. Ավետիսյան**

Այդ ֆորս-մաժորային դեպքերում: Իսկ եթե կապալառուն մի քանի մրցույթի է մասնակցել, այդքան աշխատուժ և տեխնիկա չունի, դրանց հետ կապված չի հասցնում, պատվիրատուն, կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում, տույժ, տուգանքներ կիրառում է, թե չէ: ԵՎ ինչքան է հանրագումարը:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Հիմնականում մեր մոտի աշխատանքները լրիվ ավարտվում են: Տեղափոխելու հիմնական պատճառը եթե եղանակային պայմաններն են լինում, միայն այդ դեպքում է տեղափոխվում: 2020 թվականին ենք ունեցել տեղափոխում, պատերազմի հետ կապված, Ջերմուկի դեպքերի հետ կապված ունեցել ենք տեղափոխում: Իսկ կոնկրետ, որ շինարարները չեն կարողանում ավարտել, մենք ունեցել ենք մեկ դեպք՝ Գլաձորի մշակույթի տան հետ կապված: Այստեղ կապալառուի խնդիրն էր, բայց քանի որ համայնքը ևս շահում էր օբյեկտի

նպատակային նշանակությունը փոխելուց, այդ դեպքում մենք համապատասխան միջոցներ չձեռնարկեցինք, մինչև համայնքի ավագանին որոշեց, որ դա նպատակահարմար է այլ նպատակով օգտագործել:

**ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյան**

Ընդհանրապես վերլուծություն կատարվում է սուբվենցիոն ծրագրերով նախկինում, ասենք վերջին հինգ տարիների ընթացքում կատարվածները, նպատակին ծառայում են, թե ոչ: Պետությունը ահռելի գումարներ է ծախսում, բայց արդյունքում ի՞նչ ունենք: Այդքան գումարներ, որ ծախսենք մենք գյուղեր, քաղաքներ կկառուցենք: Ինչու՞ խորքային ուսումնասիրություն չենք կատարում, որ հասկանանք, թե որ ուղղությամբ գնանք: Ծախսեր ենք անում, հինգ տարի հետո պարզվում է, որ այդ ծախսերը նպատակային չեն ծառայել:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

ՈՒրեմն մոնիթորինգի հետ կապված ասեմ, որ ամեն մի ծրագրի ընթացքում առնվազն 5 անգամ տեղում լինում է հանձնաժողովը, մասնագետները, գրառումները պարտադիր արվում է: Ավարտված ծրագրերի մասով, մեկ տարվա ընթացքում 2 այցելություն, հետո ևս մեկ այցելություն: Ես հասկանում եմ Ձեր հարցը որտեղից է գալիս, քանի որ ամբողջ հանրապետությունում դա խնդիր է դարձել, տեղ կա, որ համայնքի ղեկավարը կամ ինչ-որ այլ անձ սուբվենցիոն ծրագիրը իրականացրել է ոչ թե հասարակության ընդհանուր շահի համար, այլ անհատի շահի համար: Մեր մարզում այդպիսի բան չի արձանագրվել, գումարած դրան հետևում ենք հենց սկզբից, հանրային լսումների ժամանակ: Այնպես չի եղել, որ հանրային լսման ժամանակ որոշվի ծրագրերի հերթականությունը, մեր մարզում այլ հերթականությամբ իրականացվի: Ինձ համար արդեն պարզ է, որ մարզերում է խնդիր եղել, մենք մեկս մյուսին ինֆորմացիա ենք փոխանցում և փորձում ենք մեր մարզում դա թույլ չտալ, որ առանց հանրային լսման ինչ-որ ծրագրեր իրականացվեն: Այս պահի դրությամբ չունենք որևէ ծրագիր, որ չի օգտագործվում, բացի Աղավնաձորի գազատարներից: Դա էլ համայնքի խնդիրը չի, գազի գրասենյակի խնդիրն է, որ մինչ այս պահը թույլտվություն չի տալիս, որը որոշակի պայմանների հետ է կապված, չնայած իրենց մասնագետին մենք ընդունման-հանձնման հանձնաժողովում ընդգրկել ենք: Այնտեղ խնդիր չի առաջացրել և ակտը ստորագրվել է: Բայց մինչև հիմա գազը միացված չի:

**Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյան**

Մի մասը միացրած է:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Այս դեպքն ունենք, որ չի օգտագործվում: Մնացած բոլոր դեպքերում իրենց նպատակին ծառայել են:

**ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան**

Ես մի առաջարկություն ունեմ, եթե հնարավոր է սուբվենցիոն ծրագրերում ներառել արտերի ռիսկերի նվազեցման միջոցառումներ՝ սելաֆատարերի մաքրման, քարաթափման աշխատանքներ, թաքստոցների կառուցում, շչակների, հիդրանտների տեղադրում: Մենք համայնք ունենք, որ ընդհանրապես հիդրանտ չունի:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Մինչև 2022 թվականը չէր թույլատրվում, բայց 2022 թվականից սկսած կառավարությունը որոշում ընդունեց, որ համայնքները կարող են սուբվենցիաներով նման ծրագրեր իրականացնել: Բայց կարգի համաձայն հանրային լսումներով է արվում: Ժողովուրդը ոչ մի անգամ առաջնահերթությունը դրան չի տալիս, եթե մեր ծրագրերը նայենք 80 տոկոսը ոռոգում և խմելու ջուր է:

**ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան**

Մենք պետք է ներկայացնենք ժողովրդին դրա կարևորությունը, ոչ թե հրշեջ մեքենան եկավ մեջը ջուր չկա, այլ գյուղում ջուր չկա, գյուղում շչակ չկա: Եղեգիս համայնքում գնացել եմ ուսումնավարժական հավաքի, մի քանի օր առաջ, դինամիկը դրել ենք գյուղապետարանի լուսամուտին, որ սիրենայի ձայն միացնենք, որ ժողովուրդը հասկանա այդ ինչ ձայն է: Շատ կարևոր է ժողովրդին մատուցելը: Ժողովուրդն ասում է սգո սրահը կարևոր է, որ այդ հարցը պատվով լուծի, բայց հիդրանտները ոչ պակաս կարևոր բան են, որ այդ սրահը չվառվի: ՈՒ սկսենք մեղավոր ման գալ:

**Հարց՝ (ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան)**

Հիմա կարող ենք այդ խնդիրները սուբվենցիոն ծրագրերի միջոցով իրականացնել:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Կարող ենք: Բայց այստեղ մի սահմանափակում էլ կա: Մի անգամից մի քանի միջոցառում պետք է ընդգրկվեն, քանի որ սուբվենցիայի հայտի ներկայացման մինիմալ սահման կա, ծրագրի արժեքը առնվազն 15 միլիոն պետք է լինի: Կարող են երկու համայնք իրար հետ համագործակցել: Դրա հնարավորությունն էլ է կառավարությունը տվել: Գումարած դրան, եթե երկու համայնք միավորվեն մի ծրագրի շուրջ պետությունը 5 տոկոս իր մասնաբաժինը ավելացնում է:

**ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ Հ. Սարգսյան**

Այնքան շնորհակալ կլինեմ, որ համայնքները հիդրանտ ու շչակ ունենան:

**Պատասխան՝ (զեկուցող Ա. Կոստանյան)**

Մնացածը մենք աշխատանքային կարգով անում ենք: Սուբվենցիոն ծրագրերի ընթացքում, եթե նախագծանախահաշվային փոփոխություններ են լինում, համայնքը շահագրգռված կլինի դա արագ անելու, նախագծողի հետ աշխատեն փոփոխությունները ժամանակին կատարեն, շինարարը վերջում փաստի առաջ չկանգնի: Տեսնում ենք փաստ՝ նախագծողը սխալվել է, շինարարը աշխատանքից հետ չընկնելու համար անում է, պրծնում է, բայց դեռ նախագծում փոփոխություն չի արվել: Այդ դեպքում ուշանում է մնացած գործընթացները:

**Զեկուցող՝** **Ա. Կոստանյան**

**Օրակարգի վեցերորդ հարց՝ Սուբվենցիոն ծրագրերի ընթացիկ և ավարտական փաստաթղթերի ներկայացման ժամկետների վերաբերյալ:**

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի վեցերորդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա. Կոստանյանին:

Զեկուցողը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի պահանջներով, խիստ պահպանել սուբվենցիոն ծրագրերի փաթեթների, ավարտական փաստաթղթերի ներկայացման ժամկետները:

**Զեկուցող՝ Ա. Կոստանյան**

**Օրակարգի յոթերորդ հարց՝ Մարզպետի գաղտնի որոշման վերաբերյալ (համապատասխան ընթացակարգով):**

Նախքան նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի յոթերորդ հարցի վերաբերյալ ձայնը կտար մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ. Խուդավերդյանին, պահանջեց ապահովել համապատասխան ընթացակարգ:

Զեկուցողը համապատասխան ընթացակարգով, միայն իրավասու անձանց մասնակցությամբ, ներկայացրեց որոշման բովանդակությունը և դրանից բխող հետագա գործունեությունը:

**Զեկուցող՝ Վ. Խուդավերդյան**

Ամփոփելով նիստը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան**